



Ա Մ Ո Ւ Լ

Հ Ա Ն Գ Է Ս Ա Ջ Գ Ա Ք Ե Ն

Մամուլի իւրաքանչիւր շրջանը 52 օրինակ է :
Ատորագրութեան տեղն է Գ. Պօլիս, Մեծ Նոր խան վերի յարկ Թիւ 6 :
Դուրս երթալիք փոստային ծախքը առկողին վրայ է :

Նրբակին գիրք կէս ժամ, ոսկի 50
Մէկ Գիրք դահեկան արծաթ 1
Անկնօր նամակ չընդունուիր : — Ծանուցման տողը 5

Թիւ 968 Ժ.Գ. ՏԱՐԻ ՇՐՉԱՆ ԺԹ.

1882

ՇՈՐԱԹ 4 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Զ Ի Ն Ա Դ Ա Դ Ա Ր

Երեկ Ազգ. Պատրիարքարանին մէջ զինադա-
դարը կնքուեցաւ, բոլոր կուսակցութեան պարա-
գլուխները իրենց դրօշակները վար առնելով՝ ողջու-
նեցին զՏ. Ներսէս Սրբազան, յայտարարելով թէ
«ամենուս ուղածն դուն ես» :

Չգիտենք թէ սոյն յայտարարութիւնն անկեղծ
էր թէ ոչ, ժամանակը հարկաւ կը յայանէ զայդ :

Երեկ բաց ի Պատրիարքաց հանրածանօթ քննա-
դատէն, որ ծակամուկ եղած էր, բոլոր կուսակ-
ցութեանց պետերն ու արքանեակներն իրենց վեր-
քերը ու հարուածները դարմանելու վրայ էին :

Բոլոր եպիսկոպոսաց դէմքի գոյները նետած
էին, երեսփոխանաց և ժողովրդեան ծափահարու-
թեանց վրայ՝ իրենց սրտերը կը տրոփէին :

Երեկուան ծնած ու այսօր իրենց պաշտօնավա-
րութիւնը վերջացեալ տեսնող վարչութեան անդամք
որոց շրջաբերականի ճիւղերը դեռ ի դաւառս չէին
տարածուած, ծուռ ծուռ մէյմը Ս. Պատրիարքին՝
մէյ մ'այ երեսփոխանաց կը նայէին :

Ժողովուրդն աչքերը Ս. Պատրիարքին տնկած
էր. Պատրիարքն այ իւր աչքերը դէպի երկինք ուղ-
ղած էր :

Պատրիարքին անկեղծ և մտերիմ բարեկամնե-
րը մէյմէկ հայելիի կտոր առած՝ Պատրիարքայանի
անկիւնները քաշուելով՝ իրենց քիթերը կը չափէին
Պատրիարքութեան և Տեղապահութեան թիկնածու-
ներն այ իրենց մօրուքներուն ծայրերը կը ծամէին :

Լրագրագետներն՝ որոց մէջ մեք այ դռնուելու
պատին ունինք, դասըմէն ի վեր հարաւային հող-
մով կառաջնորդէին զժողովուրդն, երեկուրնէ ի վեր

հիւսիսային ճուրտ հողմեր սկսան փչել ժողովրդեան .
Թէրճէմանը էֆքեար յայտարարեց թէ այլևս
Փափագեանի բարեւ պիտի չտայ իր թերթին մէջ ,
Մասիս՝ որ իր քէչին երկու ամիսէ ի վեր գոմը փա-
կած էր, երեկուրնէ սկսեալ իր լերան ստորոտը ար-
ձըկեց արծելու համար, Հայրենիք իր խմբագրութիւ-
նը ներկայացնող Տաճատ վարդապետին վեղարը քէ-
օսէ քէհեային գլուխն անցուց առաջին երեսի սիւ-
նակները անոր նուիրելով, Լոյս՝ որ բացը չմնալու
համար՝ Ներսէսէն յետոյ խորէնը պնդելու վրայ էր,
այժմ ալ խորէնէն ետքը Ներսէսը պնդելու վրայ է .
Փունջ՝ որ միակ տեղապահցու մարդ ճգնաւորեանք
դատած էր, Ներսէսի անակնկալ գալստեան վրայ՝ ին-
քն ալ քաշուեցաւ իր դանտիտային ճգնարանը, Իսկ
Մամուլ որ ոչ եկեղեցականաց անձնականին և ոչ
Պատրիարքութեան փափաքող եպիսկոպոսաց դէմ
հակառակութիւն մը չունէր, երբ տեսաւ թէ իր ընդ-
դիմաբան Տիար Ս. Փափագեան ասպարէզէն քաշուե-
ցաւ ինքն այ վերջ տալով իր լուրջ յօգուածոց, իր
կատակախօսութեանը դարձաւ :

Հարկաւ այս զինադադարէն ետքը կատարեալ
հաշտութիւն մը պիտի կնքուի, սակայն չենք գիտեր
թէ պատերազմողաց միասնեքը կեդր. մատուկի այս
նեղ միճակին մէջ ինչպէս պիտի կարգադրուին, որով-
հետեւ կը լսենք թէ տեղապահցու եպիսկոպոսները
չափազանց ծախսեր ըրած են, իզմիրլեան բողոքներ
պատրաստելու համար, շատ թուղթի դրամ վատնած
վահան վ. Պարտիզակցի Համագումար ժողովը դու-
մարել աւալու համար ստորագրութիւն հաւարած և
երկու կաշիկ հինցուցած, Ալեքսիճեան Հալաթիոյ
միթիկին մէջ խմուած օղիները անվճար թողուցած
ևն. ևն. Ըստ մեզ այս հաշիւները մինչև չկար-
գադրուին և կամ մէկիկ մէկիկ ասոնք իրենց տնկերը
չղրկուին վերջնական հաշտութիւն մը տարակուսելի է :

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Երէկ ըստ հրաւիրանաց Պատրիարքական Գեր. փոխանորդ Հօր Ազգ. Ժողովն արտաքոյ կարգի ի նիստ գումարեցաւ Մայր եկեղեցւոյ մէջ ժամը 6 ու կէսին ի ներկայութեան 80ի չափ Երեսփոխանաց և երկու հազարի մօտ ունկնդիր ժողովրդեան :

Ատենը բացուած պահուն ատենապետ տօբթոր թիրեաքեան սոյն բանախօսութիւնը ըրաւ թէ՛ Ազգ. Ժողովն 1881 նոյ . 13էն ի վեր՝ յորմէհետէ Սրբազան Պատրիարքն հրաժարեցաւ . ամէն շանը և ճիգ չըննայեց որպէս զի ազգին սիրելի Պատրիարքն յախու իւր վերադարձնէ . սակայն չկրցաւ յաջողիլ քանի քանի անգամ ուղերձներ խմբագրելով , պատգամաւորութիւններ յղելով և վերջապէս ժողովն ամբողջ Նորին Սրբազնութեան անձամբ երթալով : Վերջապէս պարտաւորեցաւ ցաւ ի սիրտ ընդունիլ 1882 սեպտ. 30ի նստին մէջ Սրբազան Պատրիարքի հրաժարականը , և յտուկ բանաձևով յտանկայս շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Պատրիարքի , գնահատելով Նորին Սրբազնութեան ազգին ու երկրին մատուցած ծառայութիւնները : Ազգ. Ժողովն Ս. Պատրիարքի հրաժարականն ընդունելէ և Բ. Իրան հաղորդելէ և տեղապահի մը ընտրութեան հրամանը ինդրելէ յետոյ՝ ըստ Մահմանադրութեան խառն ժողովոյ կազմութեան ձեռնարկելով՝ ըստ օրինի Բ. Իրան ներկայացոյց ի վաւերացումն :

Խառն ժողովն Բ. Իրանէն իր վաւերացումն ընդունելէ յետոյ մինչդեռ ժամէ ի ժամ տեղապահի մը ընտրութեան հրամանագրի մը գալստեան կ'սպասէր . հետեւեալ գրութիւնը ստացաւ Բ. Իրան Մէզայիպէ իւտրիլիէթի կազմանէ՝

« Էրմէնի Բաթրիքիսանէսինէ
« Բիւթպէթլու Բաթրիք Էֆէնտի հաղրէթլէրինին
« վու դուրի իսթիֆայէրինէ մէպնի , խայէֆինին թայ-
« երինին տէկին պիք բաթրիք գայմադամընըն ինթի-
« խապընա մէհզանիյէթ թայէպլինէ տայիր , Էվվէրճէ
« ախզ օլունան թագրիլէր իւզէրինէ , քէյֆիեթթ
« Պապը Ալլիյէ , վէ օրատան տա խաթրիֆայի Շահա
« նէնէ արզ օլունամու շ օլտուղու հայտէ , միւ շարիէյհ
« իսթիֆասընը կէրի ալմը շաուղունտան , օլ պապ-
« տէ շէրէֆվարիտ օլան թէգքէրէյի սամիյէ մուճի-
« պինճէ մէմուրիլիէթինէ տէվամ էյլէմէսի քէնտի-
« սինէ պա թէգքէրէի նէգարէթֆէնահի պիլտրիլիմիշ
« օլմաղլէ պէյանը հալ սիյեազընտա իշպու միւզա-
« քէրէ թէրթիմ գըլընաը »

Այս գրութեան ընթերցումէն յետոյ , շարունակեց իւր խօսքը ըսելով . արդէն համայն ազգն ու երեսփոխանութիւնն իւր սիրելի Պատրիարքին հրաժարականն ցաւ ի սիրտ ընդունած ըլլալուն՝ սոյն բարձրագոյն հրամանն հարկաւ մեծաւ բերկրութեամբ կընդունի Ազգ. Ժողովս , տեսնելով որ իր սիրելի Պատրիարքը վերստին իր ծոցը կը դառնայ , վեհ . կայսեր բարձր հրամանաւ :

Ատենապետն սոյն բանախօսութենէն յետոյ անհուն շնորհակալութիւն յայտնեց ի դիմաց Մայր դիւանի առ Օգոստ . Վեհ . Սուլթանն , առ Նորին բարձր . Մեծ , Եպարդոս Սայիտ փաշա և առ Նորին սրբազնութիւն Տ. Տ. Ներսէս սրբազան Պատրիարքն , որ զիջանելով սոյն բարձր հրամանին ի սէր ազգին ետ առնուլ հաճած է իւր հրաժարականն , և վերջ տուած եղաւ վերջի ատեններս ազգին մէջ ծագած շատ մը զգուելի տեսարանաց :

Այս առթիւ յիշեց նաև թէ Ս . Պատրիարքի այս վերադարձը պէտք չէ որ տարապարտ կասկածանաց տեղի տայ , ըստ որում ըստ Մահմանադրութեան Պատրիարքունք կը հաստատուին կամ կը հրաժարուին Կայսերական իրատէսով , և այժմ հակասական վիճակի մը մէջ գտնուած չեմք ըլլար քանի որ իրատէսով շնորհուած է մեր Ազգային օրէնքը և իրատէսով մ'այ . այժմ կը վերադառնայ իւր սիրելի Պատրիարքն ի ծոց Ազգային Ժողովոյ որ արդէն ցաւ ի սիրտ ընդունած էր իր հրաժարականն :

Ատենապետն սոյն կարեւոր տեղեկութիւնները հաղորդելէ վերջ՝ Մայր դիւանի կողմէն նախապէս պատրաստեալ բանաձեւ մը ներկայացոյց սոյն իմաստով . Ազգ . Ժողովս հաճութեամբ լսելով Վեհ . Սուլթանի հրամանն , որ զՍմէն . Տ. Ներսէս սրբազան Պատրիարքի հրաժարականն չընդունելով՝ կը հրամայէ Նորին սրբազնութեան շարունակել իր պատրիարքական պաշտօնը , ուստի Ազգ . Ժողովս առ Վեհ . Սուլթանն խորին շնորհակալութիւն կը յայտնէ յտանկայս « Կեցցէ վեհ . Սուլթան մեր » . կոչելով :

Ասոր վրայ Ատենապետն առաջարկեց անմիջապէս խառն պատգամաւորութիւն մը կազմելու եւ հրաւիրելու համար զՍրբազան Պատրիարքն , որ նոյն միջոցին Երուսաղիմայտունը կը գտնուէր :

Պատգամաւորութիւնն երթալով՝ առաջնորդութեամբ Մայր եկեղեցւոյ երգեցիկ մանկանց , որք չապիկներ հագած և ձեռքերնին դափնիներ բռնած կերպէին Նորին սրբազնութեան վրայ յօրինած Տ. թաշնեանի երգը . հանդիսաւոր կերպով բերին զՍ. Պատրիարքն յեկեղեցի , ուր երեսփոխանութիւնն համօրէն ունկնդիր ժողովրդեան հետ ի միասին բուռն

ծափահարութեամբ թնդացուցին եկեղեցւոյ կամարները :

Երբ Ս. Պատրիարք իր աթոռը բարձրացաւ, Ատենապետն յտանկայս սկսաւ խօսիլ . շնորհաւորելով Նորին սրբազնութեան վերագարձն ի ծոց Ազգային ժողովոյ, և մեծապէս զրուատեց Նորին սրբազնութեան ութամեայ Պատրիարքութեան շրջանին մէջ Ազգին մատուցած ծառայութիւնները և յիշեց այն բարեմասնութիւնները, զորս Նորին սրբազնութիւնն ունէր իր ծանուցեալ փորձառութեան հետ, սրբազգին բազմանքները պիտի լրացնեն ի մեծ միւլթարութիւն և ուրախութիւն համայն ազգին :

Ատենապետն զայս ըսելէ յետոյ դարձեալ շնորհակալութիւնն յայտնեց առ Ա.Ե.Տ. Սուլթանն, առ մեծ. Սպարքոսն Սայիտ փաշա, և առ Նորին Սրբազնութիւն, որ հաճեցաւ զիջանիլ Բարձրագոյն հրամանաց առջեւ, հակառակ իր անձնական վատաւոյջութեան :

Ատենապետն իր սոյն խօսքերն աւարտելէ յետոյ Ամեն. Սրբազան Պատրիարքն յուզեալ սրտիւ պատասխանելով յիշեց առ ազգն ունեցած վեհ. Սուլթանին գոված ու գորովը և յուսարից խօստուները զոր ի մօտոյ պիտի կատարուին համայն ազգին բարձանաց համաձայն, և ինքը թէպէտ տկար բայց Նորին կայսերական հրամանն ընդունած է իբրեւ Աստուծոյ փոխանորդի մը, ինչպէս քրիստոնէական կրօնքը կուսուցանէ :

Այս խօսքերն արտասանելով՝ օրհնեց . զԱ.Ե.Տ. Սուլթանն, որ յաւիտեան իւր գահոյից վրայ ամրապինդ մնալով երկար և երջանիկ օրեր վայելէ, օրհնեց ազգը և խնդրեց Աստուծմէ, որ Օսմանեան հովանւոյն ներքեւէն անբաժան պահէ զՀայ ազգն, ինչպէս որ դարերէ ի վեր պահպանուած է, պահպանելով նաև իր կրօնն, ազգութիւնն ու լեզուն : Այս բարեմաղթութեան միջոցին դարձեալ ժողովուրդն շերմագին ծափահարեց յանուն վեհ. Սուլթանի :

Յետոյ իր խօսքն համայն ազգին ու ժողովին ուղղելով՝ յորդորեց որ ամէն Հայ անկեղծութեամբ, անյիշարութեամբ, միութեամբ եւ զոհաբերութեամբ վարուի իրարու հետ իբրեւ մի ընտանիք, հոգ տանելով զպրօցաց յառաջադիմութեան, և եկեղեցեաց պայծառութեան :

Որովհետեւ, յարեց, թէ ազգն որչափ յառաջագիմէ, այնչափ բարիք կը վայելէ, պէտք է քիչ խօսք ընելով՝ շատ գործ տեսնել, որպէս զի ազգն օր առ օր իր փրկութեան հասնի, որ ամենուս փափաքելին է :

Այս խօսքերը ներկայ դանուող բոլոր ժողովականաց և ունկնդիր ժողովրդեան վրայ մեծ տպաւորութիւն ըրին, եւ խիստ համակրութեամբ մինչեւ վերջը ունկն դրին ամենայն մտադիւրութեամբ :

Ասկէ վերջ՝ Խառն ժողովոյ մէկ գիրը կարգացուեցաւ, որ կը ծանուցանէր իր պաշտօնավարութեան ժամանակի լրանալը և կը խօստանար մինչև ցնոր ընտրութիւն վարչութեան իր պաշտօնը շարունակել :

Ժողովն սոյն խնդիրն օրակարգը անցնել որոշելով՝ առ Ա.Ե.Տ. Սուլթանն մատուցուելիք ուղերձին նկատմամբ դրադեցաւ և քանի մը դիտողութիւններէ յետոյ՝ որոշեց խառն յանձնախմբի մը միջոցաւ խմբագրել և քիչ աւուր մէջ բոլոր երեսփոխանաց ստորագրել տալէ յետոյ՝ մատուցանել կայսերական Կառավարութեան :

Այս որոշումէն յետոյ ատենը փակուեցաւ, ժողովը ԱՅ օրէն յետոյ բանալու որոշմամբ և դարձեալ երգեցիկ մանկանց և եկեղեցական Ս. Հարց առաջնորդութեամբ Ամեն. Ս. Պատրիարքն ի Պատրիարքարան բերուեցաւ :

Ահա այսպէս պատրիարքական խնդիրն ի հիմանէ վերջ գտնելով՝ ամբողջ ազգը մեծ դոհ և ուրախ եղաւ իր ոխրելի Պատրիարքը վերստին տեսնելով Պատրիարքական դահուն վրայ :

Հանգիսիս խմբագրութիւնն ի խորոց սրտի կարողութիւն կը մաղթէ առ Ամեն. Տ. Ներսէս Սրբազան Պատրիարքն :

ԶՈՒՍԱՐՃԱԼԻՔ

Պ. Ն. ճամբորդութենէ վերադառնալով կրօն կնքը .

— Ահ տիկին մեծ փորձանք մը անցուցինք շոգեկառքին դրէնը ճամբան ոչխարաց հօտին վրայէն անցաւ, բայց բարեբաղդաբար մարդոց վնաս մը չեղաւ, անասուններն միայն ումանք ծանր եւ ումանք թեթեւ վնասուեցան :

— Յուսում թէ, կը պատասխանէ կենը, զուն ալ թեթեւ վնասողներէն ըլլալու ես . շուտ ըսէ՛ ո՛ւր տեղը ցուցուցիր :

* * *

Պ. Շ. իւր մէկ բարեկամէն հրաւիրագիր մը կրնդունի որ զինքը կիրակի օրուան ճաշի կը հրաւիրէր, ահայն մտնալով ժամագրութիւնը չերթար, եւ երբ հետեւեալ օր յիշեալ հրաւիրող բարեկամը ճամբան կը տեսնէ, հրաւէրը միտքը գալով կերթայ քովը ու կրօն :

— Ներեցէ՛ք բարեկամ իրաւ որ հրաւիրագիրը չառի :

* * *

Երկու օրիորդ իրարու հետ կը խօսակցէին այն մտքէ
չանցած առաջին քայլին վրայ որ կանխին ընդհանրապէս ազ-
ջիկները :

— Ես կըսէ մին , յանկարծակիի եկայ այն պահուն ու
չի կրցայ բան մը ըսել :

— Եյ չպոտացի՞ր , կը հարցունէ միւսը :

— Այո՛ , ինը ամիսէ ետքը

Մարդուն մէկը իւր տանը մէջ սենեակ մը վարձու կու-
տայ , բժշկութիւն սորվող երիտասարդի մը , այն պայմա-
նաւ որ անաթօմիի վերաբերեալ մարդու բեկորներ չի պիտի
բերէ տանը մէջ :

Օրին մէկը երիտասարդը տանուտէրը կը տեսնէ եւ
կազաչէ որ իրեն հետ իր սենեակը գայ . տանուտէրը կար-
ծելով թէ սենեակին մէջ նորոգութեան մը խնդրոյ համար
է կերթայ եւ երբ ներս կը մտնէ ուսանողը վարագոյր մը
բանալով նայէ՝ կըսէ :

— Հէ՛ աւրոզ կմախք մը . . . կը թոթովէ տանուտէրը
մազերը անկուած եւ զարհուրած :

— Այո՛ , կըսէ , ուսանողը , ի՞նչպէս աղէկ յաջողած
չեմ , ես չիմեցի եւ կնկան կմախք է :

— Թշուառական , հապա պայմաննիս :

— Բնաւ պայմաննիս եղծած չեմ , վասն զի կինը գուր-
սէն ողջ բերեր էի :

* * *

Գաղղիացի երիտասարդ պաշտօնատարներ Գերմանիոյ
փոքր քաղաքի մը մէջ զտնուած լինելով , անոնցմէ մին ա-
ռաջարկեց իւր ընկերաց երթալ բոնչ խմել պանդոկի մը մէջ
որուն տէրը ճանչելուն կըսէր , « եղախան մարմին մը պիտի
սեանաք . այնչափ խոշոր խոշոր ունայնախօսութիւններ պի-
տի ընեմ որ բան մը չպիտի ըսէ . ետեւէս եկէք :

— Բօնչ , կըսէ մտած ժամանակ .

— Եա՛ , մայն հէր (այո՛ , պարոն) :

— Է՛հ , սիրելի Հէյմանս , առաջուան պէս աւանակ ես :

— Եա՛ , մայն հէր :

— Այնպէս կը կարծես թէ այս բոլոր տղայք քուկդ նս՛
հէ՛ , այնպէս չէ՞ :

— Եա մայն հէր :

Եւ բոլոր երիտասարդները խնդալէ կը մարտին :

Երբ գործը վճարելուն եկաւ , մեր զուարճախօսը զԵՐ-
պանէն քառասուն Ֆրանկոնց մը հանեց :

— Առ ասի . եւ երեսուն եւ հինգ Ֆրանկ տուր ետ :

— Եա մայն հէր :

Այսու հանդերձ պանդոկապետը քառասուն Ֆրանկոն-
ցը գրասեղանը դրաւ եւ բան մ'ալ ետ չէր տար :

— Բայց անասուն , չե՞ս ճշտակնար , որ հինգ Ֆրանկ
բօնչի ստակն է եւ երեսունը հինգ ալ ետ պիտի տաս :

— Ո՛չ պարոն , բան մ'ալ ետ չպիտի տրուի , ըսաւ
պանդոկապետը ծանր եւ յուրջ ձայնով մը , հինգ Ֆրանկ
բօնչն եւ՛ երեսուն եւ հինգ Ֆրանկ այն սրիկայախօսութեանց
գոր քառօրդ ժամէ մը ի վեր ինձ կուղղէք , հաշիւը ձիւզ
կըլլայ :

— Իրաւունք ունիք , Պ . Հէյման , ըսաւ պաշտօնատարը
բիչ մը աւօթապարտ , դասը լաւ է եւ նոյն իսկ չատ սուղ
ալ չէ :

Միւսիւ Վէնսան իւր բարեկամուհի մամուլէլ Ա-
նէթի տուած այցելութենէն մեկնած ժամանակ կը
սկսի աչքերը սենեակին չորս կողմը շրջիլ .

Անէթ զայս նշմարելով կը հարցնէ . — Ի՞նչ ու-
նիս Վէնսան , բա՞ն մը կը բնառես :

— Ո՛հ ոչինչ սիրելիս . բայց ամեն անգամ երբ
կը մեկնիմ ասկէց առանց բան մը տանելու , կը կար-
ծեմ թէ կորուստ մ'ունիմ :

Քանի մը մօտիսթրա աղջկանց մէջ , — Բայց ինչ
եղաւ այս Ամալիանն , քանի մը օրէ ի վեր բոլորովին
փոխուած է , տխուր է և կարծես թէ կորուստ մ'ունի .
— Թերևս կը պատասխանէ չարամիտներէն մին
իւր « դրամագլուխը » կորուսած է . նոյն

Տան մը տիրուհու յոյն՝ որ հազիւ 22 տարեկան
կար , կը ներկայացնեն 26 ամեայ բժիշկ մը .

— Բայց ինչպէս պարոն , այդ տարիքնուդ մէջ
արդէն բժիշկ , կը հարցնէ տիկինը .

Տոբթեօրը կը խոնարհի ժպտելով և կը պատաս-
խանէ . — Այո՛ տիկին , բայց առ այժմ մտադիր եմ
միայն տղաքներ դարմանել :

— Խիստ լաւ , յարեց գեղանի տիրուհին , իմ ալ
բժիշկս եղիք : նոյն

Լրագիր մը մենամարտութեան մը վրայ անդե-
կութիւն տալու առթիւ հետեւեալը կը դրէ . —
Մենամարտութիւնը ատրճանակաւ պիտի կատար-
ուէր . երկու հակառակորդք « հաւասար հեռաւո-
րութեամբ » կեցած էին . . . նոյն

— Բարեկամ ինչո՞ւ լուսինը տոգոյն է :

— Գիշերները միշտ դուրսը անցնողին վիճակը
այդ է : նոյն

Պատժական ատենի մէջ . — Գարբինի աշակերտ
մը կ'ամբաստանէր իւր վարպետը թէ զինքը չարա-
չար կը ծեծեր , — Նախագահը կը հարցնէ աշ-
կերտին թէ ինչ վարձք կը ստանար . — Լաւ ապ-
տակ : — Նախագահը վկաները մտիկ ընելէ յետոյ
կը հարցնէ ամբաստանելոյն թէ ինչ պատճառաւ
այս օրերս ծեծը աւելցուցած էր . — Բնականաբար
քանի որ վերջերս ամառականի յաւելում կը պահան-
ջէր . — նոյն

ՍՈՒՎՈՒՆԻՐ

Վալ միւսիւ Լօրանս հօշ կէլիխսինիդ :
— Մատմագէլ թէչէքբիւր իտէրիմ , պու նէ՛
միւրվէթէ նայիլ օլտուգ կինէ . Լօրէնին եանընա
պիրտէ միւսիւ դամթմանըզըն սէպէպի :

- Նէ արմէք հէմ միւսիւսին , հէմ տէ էֆէհարի :
- Վա՛յ , վա՛յ , դամէթիմիդ արթտըգճա արթը-
յոր :
- Քուզում Լօրէն սէնէ պաշընա դաշ կիւն
վար :
- Հա՛ , աղնատըմ շիմտի միւսիւսինն վէ էֆէն-
տինին սէպէպլինի , էհ նէյիսէ , պիր այ վար մատ-
մաղէլ :
- Սանայ ոանֆասունայ պիր շէյ սօրաճաղըմ :
- Սէօյլէ պենիմ նոնօմ՝ վէրթիւնիմ :
- էյ կինէ հօպպալանմայ Լօրէն : ուսլու
տուր :
- Վայ արմէնի փէք շաբուք չէվիրտիք գըպլէյէ :
- Եօգ , աման պրագմասըն քի լաֆըմը պիթի-
րէյիս՝ Եիմտի աղնամար իսթէրիմ քի սենէ պաշըն-
տա նէ՞ հէտիյէ վէրէճէքսին պանայ :
- Թամամ , հիչ օ սէօյլէնիր շէյ մի տիր , օ պէ-
նիմ միւրվէթիմտէն սօրուլուր :
- Վո՛ւյ . սէնին միւրվէթինի կէօրտիւք կէչէն
սէնէ . պիր գըրմըղը մէնտիլ իչինտէ իւշ թանէ եալ-
տըղը թահանը թօփ արմըշ կէթիրմիչ իտին , օլ դա-
տար խալգ իչինտէ եէրէրէ կէչաիմ :
- Մատմաղէլ , կէչէն սէնէ պիլիրսինիդ քի . կէօ-
րիւշմէլէրիմիդ պու դատար սըգըճայ օյմատըղընտան
հալինճէզ սուվունիրիմիդտէ կէվշէքճէնէ օյմագ իգ-
թիգալ իտէր իտի :
- Աման Լօրէն , կինէ խօրեաթճայ պիր շէյ
եարմայ , ինանըրտան չըտըրըրըմ , չիւնքի ամեամըն
թագըմը պիլիրսին քի պիղտէ միսաֆիրլըրտէ տիրէր :
- Սէն մէրադ իթմէ , եալընըզ օ ադչամ իչին
պիր պէօյիւճէք թապագ հաղըրլայ :
- Քա աման նէ՞ կէթիրէճէքսին քի :
- Թահընըր բրասա տօլմասը :
- Վո՛ւյ շիմտի ագըմայ կէյէճէք :
- Ագընկա կէլմէսին , պու սէնէ էփէյիճէ տօլ-
մանըղը եութտում , օլ ադչամըսը կայրու սըրայ պէ-
նիմ տիր :

ՓԷՏԵՄԱԼԻՆ ԿՈՒՆԵ

Քա՛ խաչոր Զարիկ տուտու . անանկ աղտոտերեմ քի
տանկ նանկ օրիթը ամիս է քի պաղնիք մը կացած չեմ՝
փարային աչըր քեօնա քի ասանկ մունտառ մնացեր ենք :

—Երաւօր ես ալ ըսածիդ պէս աղտոտեմ , քա՛ աղէկ
միտքս ինկաւ , վաղը Պիպի տուտուն պաղնիք պիտի տա-
նիմ սուղէն հանելու դուն ալ կիւր , ես պաղնիքիդ փա-
րան կուտամ , հազըր մահանայով կացած կըլաս , ըսելով

Զարիկ տուտու կը համոզէ մեր Սարա տուտուն , որ շնորհակ ա
ըլլալով կը հարցնէ :

—Քուզում Զարիկ տուտու , Պիպի տուտունին ինչը մօ-
ուաւ քի :

—Քա մէղա՛յ , շիյտեօ կոր . լըման երկու ամիս է քի
էրիլը մեռաւ , տահա խապար չունի՞ս :

—Քա զավալըն , Աստուած օլորմի՛ հողուն , ինչ ալը-
ման տանտկին մարդ էր :

—Հա ես , հինկ օրին մէջը մեռաւ , իչտէ պիտի տա-
նիմ քառունը հանելու , վաղը կանուխ հոս էկու պարա-
պար կերթանք :

Սարա տուտու կը զգատուի եւ հետեւեալ ստաու կա-
նուխ ժամոյնը սօփան չը դարկած . Զարիկ տուտունին դու-
որ ձեռք կաննէ , չտէ ու չալէ , զարկ ու զարկ : Զարիկ
տուտու արթննալով լեղապատառ կելլէ ու դուռը բաճալով

—Քա վա՛յ մեղքիս . քեզի կանուխ էկու ըմինք նէ ,
չըսինք քի կէս գիշերուն էկու ես , տահա սահաթը տասնէ :

—Ա՛ֆ կընես , Զարիկ տուտու , լուսունկային լուսին
կիտծա քի լուսցեր է , դարար չունի ես կը նօտիմ կը պէք-
լէյէմ :

Վերջապէս երեք ժամէն վերջը առտու ըլլալով , Զա-
րիկ տուտու : Սարա տուտու կելլեն ու միտեալով խառ-
նորդ եալանճի տողմանի , թուրչու պալըղի , ու լահանայ
թուրչուսիով բեռնաւորեալ բաղնիքի ճամբան ձեռք կառ-
նուն եւ կը մանեն բաղնիք :

—Վո՛ւյ մեռելներդ լուսըրը պառկի Զարիկ տուտու :
ինտոր ինծի աղտոտութենէ ազատեցիր նէ , Աստուած ալ
մեռելներդ հողին թեմղցնէ , քա խաչոր արքաՎուրթինին
օրթանես :

—Ատ ինչ լաֆ է , Սարա տուտու , մեղայ , կըլու դու-
րուչին լախըրտըն կըլլայ քի պերանդ կաննես կոր . հէմ ես
հազ չեմ ըներ ասանկ ըրած էյլիկներօ երեսիս տան , մէյ մը
տահա բերանդ չառնես խաթրօ կը մնայ :

Այսպէս լուսացուելով ու խօսելով ու հոն տեղ տարած
կերակուրնին բոլորովին սրբելով սկողելով Զարիկ եւ Պիպի
տուտունները վերջին թասերնին գլուխնէն վար թափելով ,
խուրնային մնաս բարովը կը դնեն ու դուրս կելլեն , իսկ
մեր Սարա տուտուն՝ ինչպէս որ ըսինք եօթը ամիս բաղնիքի
երես չտեսնալուն մեռէն չուզեր դուրս ելնել եւ հետղճտէ
Չուրիըր կը թափէ գլխէն վար , այս միջոցին կը տեսնէ որ
դիմացի խուրնային քով փէշտըմալ մը կայ որ հոն մոռցեր
էին , ասիկա իմ խամէթս է ըսելով կաննէ ու դուրս կելլէ :

—Քա նայէ Զարիկ տուտու ինչ անըման փէշտըմալ մը
գտայ , հիչ չընէ նէ տաս դուրոշ տէյէր ունի քովի Մանեի-
կին կը ծախեմ :

—Հիմայ ատոր վախիթը չէ , պէր դնեմ պոխճան ըսե-
լով ձեռքին կաննէ եւ պատրաստուելով բաղնիքէն կելլեն
ու տուն կուգան :

Քիչ մը նստելէն յետոյ , Սարա տուտու եւ Պիպի տու-
տու ոտք կելլեն երթալու եւ բարեմաղթութիւններ տալէն
վերջը կըսէ Սարա տուտու :

—Եավրում Զարիկ տուտու , սա կտամ փէշտըմալս տուր
սէ տանիմ :

—Քա մեղայ ատար պան մնէ քի կուզես կոր , ան իմ
թոռանս խամէթս է անոր պիտի տամ հազըր ան ալ չունի :
Խօսքերը կը շատնան ձայները կը բարձրանան : կսկսին

ձեռնկուրի . Սարա փէշտըմալը կուղէ , իսկ մեր բարերար տուտուն կը պօռալ :

—Խաչոր կտոր կտոր կընեմ , չեմ իտար , թոռանս պիտի ասամ :

—Ինչու թողիք պիտի տաս , ան ես կտայ իմս է , պաղնիք մը տարիր տէյի քսան դուրուչի փէշտըմալս դապթը կընես կոր , լսուած պան է :

—Հա' . լսուած պան է , պիտի չիտամ ըսելու կուրը կը մեծնայ , ու դրացիք կրակ կարծելով դուրս կը թափին , եւ տուն կը մանեն գործին էութիւնը իմանալու համար :

—Սարա խոտուու կըսէ , քա եսվրում քօքօնա պուհագ տըր , արեւդ սիրեմ սէն սէօյլէ պէն պիր փէշտըմալ պուլտում էլիմաէն ալըտօր :

—Քալէ ծանիմու խօլիմու էսքասէ , նէ սէօյլէյէծէիմ . պիր փէշտիմալ իցին բաթիրաի հից օլուր . ցօծուք գօրգաի . եաթաք իցինսէ սիցրատի :

—Քա տուն ըսէ կիւլիւկ հանըմ ասանկ պան կըլլա ,

—է քա ինչ ըսես պիտի թէրմաշ մնալիք փէշտըմալի մը համար մահալիցին ոտք հանեցիք :

Սյսպէս ամբօխը միջամտելով կուրը կը դադրեցնեն . կատողը կը դատեն եւ Սարա տուտու փէշտըմալին վրայ ձեռ մ'ալ ուտելով աուն կը դառնայ եւ այսպէս կուրը կը վերջանայ :

0 .

Տէր պապաներու և վարժապետներու հետ քանի որ անուշ կերթաս , շուտով թաղական խորհրդոյ անդամ կըլլաս :

* *

Ձեռքդ աւանդով սեղանաւորի մը մօտեցար , ձգածներէդ ա'լ բան մի յուսար :

* *

Ոսկերիչ մը եթէ ամչնալ ունի , հասկցիր որ բան մը չունի :

* *

Կաղանդն դալուն ամենեւին մի' մոմտար , այս տարի սիրուհիիդ թուղթ մը շաքար սար :

* *

Համբերութիւնը կուտ մը չունի . ձեռքերդ ծոցըդ դնելդ ալ օգուտ չունի :

* *

Եթէ կուզես հանգիստ ապրիլ , կանանց ձայնին քիչ մօտեցիր :

* *

Սիրուհիդ եթէ լալ սկսէ , սիրտդ շատ ամուր բռնէ :

* *

Կանանց վրայ հաւատարմութիւն կըլլայ , եթէ (հալուճը) սեւ բուսնելու որ ըլլայ :

* *

Ոտքդ ինկաւ . Սամաթիա դացիր , ինչո՞ւ Հայկականէն հատ մը չի կլլեցիր :

Ա Ձ Դ

Միացեալ ընկերութեանց կեդր , Ժողովոյ Գ. նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի 5/17 դեկտ . Ղալաթիոյ կեդր . վարժարանին մէջ . Ծամը ճիշդ 7ին :

Կը խնդրուի համայն Պատ . Երեսփոխաններէ որ հաճին կատարել իրենց ընկերական պարտականութիւնն :

Կեդրոնական Ժողովոյ
Նախագահ
Տ. Տ. ՏԻՒՐՐԻ

Կ. Պօլիս 4 դեկտ. 1882]

Օ Ր Ա Կ Ա Ր Գ 1

1. Ընթերց . և վաւերաց . նախորդ նստի պտենագրութեան
2. Դիւանական թղթակցութիւն
3. Առաջարկութիւնք Տնօրէն Ժողովոյ
4. Խնդիր դասադրոց
5. Տեղեկագիր Տնօրէն Ժողովոյ (ապրիլ 25 թուական)
6. Դրութիւն 16 երեսփոխանաց
7. Տեղեկագիր Արարատ . ընկերութեան Հաշուեքննիչ յանձնաժողովոյ :

ՎԵՆԵՏԿՈՅ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

(Շարունակութիւն տես թիւ 967)

« Ո՞ իմաստուն և անաչառ դատաւոր . տե՛ս » Հրէայ , Դանիէլ մը , դատելու եկած է : »

Շայլօք , զիտնալով իր անադորոյն խորհրդին պարտութիւնը , ըսաւ յուսահատ դէմքով մը , որ յանձն կառնուր դրամը ընդունել :

Պասանիօ ինքնիրմէն դուրս ելաւ ուրախութենէն Անթօնիօի անակնկալ ազատութեանը համար . ու մէկէն աղաղակեց « ահաւասիկ , ա՛ն դրամը : »

Բայց Պորկիա արդիւելով զնա ըսաւ , « քիչ մ'ալ համբերէ , մ'աճապարեր , վասն զի Հրէայն իր վճիռը պիտի ընդունի :

« Մն' ուրեմն , Շայլօք , պատրաստուէ միտը կտրելու . բայց զգուշացի՛ր որ ոչ միայն արեան կաթիլ մը հեղուս , այլ նաև մէկ լիտրէն ո՛չ աւելի և ո՛չ նուազ պիտի ըլլայ , եթէ խուն ինչ աւելի կամ նուազ լինի , եթէ լծակաց մին մազի մը ձանրութեամբ և եթ հակի , յայնժամ դու մահուան պիտի դատապարտուիս ըստ Վենետիկեան օրինաց , և բոլոր ժառանգութիւնդ պիտի դրաւուի ի պետութեանէն :

« Ա՛յ , ըսաւ Շայլօք , միս չեմ ուզեր , դրամս միայն տուէք ինձ , և կերթամ :

« Իրամդ պատրաստ է ըսաւ , Պասանիօ , ահաւասիկ :

Շայլօք մօտեցաւ դրամն առնելու , բայց փաստաբանը դարձեալ չիմտոց ըսելով :

« Կեցի՛ր . Հրէայ , տակաւին ուրիշ ըսելիք ունի՞մքեզ , ըստ Վենետիկեան օրինաց պէտք է որ կառավարութիւնը գրաւէ ժառանգութիւնդ . վասն զի քու քաղաքացեացդ միոյն կենաց դէմ դաւ գործեցիր , արդ քուկին կեանքդ Գուքսին գթութեանը կը յանձնեմ : Ընրադրէ նորա առջեւ , և աղաչէ որ ներէ քեզ :

Այն ատեն ըսաւ Գուքսը Շայլօքին , « տե՛ս ուրեմն մեր քրիստոնէական սղոյն տարբերութիւնը , աղերսելէդ առաջ ես կը շնորհեմ քեզի կեանքդ միայն քու ընչիցդ կէսը Անթօնիօն և միւս կէսն ալ կառավարութեան պիտի տրուի :

Վեհանձն Անթօնիօն ըսաւ յայնժամ , իմ բաժինս չեմ առներ եթէ Շայլօք ստորագրութիւն մը տայ մեռնելէն վերջը իւր աղջկանը թողուլ զայն : Որովհետեւ Հրէին միամօր դուստրը՝ հակառակ իւր հօրը կամաց քրիստոնէայ երիտասարդի մը հետ ամուսնացած ըլլալով , հայրը զրկած էր զնա , ի ժառանգութեանէ , և աղջկան ամուսինն այ՛ որ Լօրէնցօ կը կոչուէր , Անթօնիօի մտերիմ բարեկամն էր :

Հրէայն հաւանեցաւ ասոր , և այսպէս իւր վըրէժխնդրութեան յոյսը ի դերեւ ելնելով . բոլոր հարթութիւնէն ալ զրկուեցաւ . և ժամ յառաջ կուզէր խոյս աւալ ժողովքէն , ըսելով « հիւանդ եմ , թող տուէք որ տունս երթամ , և մաւրհակն ալ հետս զըրկեցէք որ ստորագրեմ : և հարստութեանս կէսն ալ աղջկանս անցնեմ :

« Մն' ուրեմն զնա՛ , ըսաւ Գուքսը , և ստորագրէ բայց թէ որ ըրած անգթութեանդ վրայ զղջաս և քրիստոնէայ ըլլաս , կառավարութիւնը քեզ կընծայէ հարստութեանդ միւս բաժինն ալ :

Հուսկ ուրեմն , Գուքսը արձակեց զԱնթօնիօն և լուծեց ատեանը : Գովեց երիտասարդ փաստաբանին իմաստութիւնն ու նրբամտութիւնը , և սեղանի հըրաւիրեց զնա իւր տունը :

Պորկիա՛ որ իւր ամուսինէն առաջ Աէլմօնթ կուզէր դառնալ , պատասխանեց , « առ իս ցըցուցած սիրոյ դէմ շնորհակալութիւնս կը մատուցանեմ ձեզ խոնարհաբար , սակայն պարտիմ ընդ փոյթ մեկնիլ : »

Գուքսը ըսաւ , շատ կը ցաւիմ որ քեզ ինձ սեղանակից ունենայու հաճոքը պիտի չունենամ . եւ Անթօնիօն դառնալով ըսաւ . « վարձատրէ՛ , այս ազնուականը , ըստ իս յանչափս երախտապարտ ես իրեն : »

Գուքսն ու ծերակոյտը մեկնեցան : և Պասանիօ ըսաւ Պորկիայի մեծարդոյ տէր , ես և Անթօնիօ բարեկամս ազատեցանք այսօր , դառն և կակծեցուցիչ պատուհասէ մը շնորհիւ ձեր իմաստութեան . արդ կազաչեմ հաճէիք ընդունել այս երեք հազար տուքադը , զոր Հրէին կը պարտէինք :

« Եւ միշտ երախտապարտ պիտի ըլլամք Ձեր սիրոյն և ծառայութեան համար , աւելցուց Անթօնիօ :

Պորկիա չէր կրնար համոզուիլ դրամն ընդունելու . բայց Պասանիօ շատ կատիպէր զնա փոխարէն վարձատրութիւն մը ընդունելու . այն ատեն ըսաւ . « ձեռնոցդ տուր ինձ , որ ինչան սիրոյդ պիտի կրեմ զայն :

Երբոր Պասանիօ կը հանէր ձեռնոցները , Պորկիա դիտեց իւր ընծայած մատանին . այժմ պէտք էր որ փոխանակ ձեռնոցի մատանին խնդրէր խորագէտ տիկինը , որպէս զի զիրար ճանչնալէն ետքը , կարենար յանչափս գուարձացնել զնա :

« Առ քեզ ունեցած սիրոյս համար կը խնդրեմ՝ այս մատանին : »

Պասանիօ փաստաբանին այս խնդրոյն վրայ սատիկ տնրեցաւ , անհնարին էր զրկուիլ այն մատանիէն , և պատասխանեց խառովեալ դէմքով մը թէ չէր կրնար տալ մատանին որովհետեւ կնոջ ընծան էր և մանաւանդ որ ուխտած էր մէկու մը չտալ : Բայց այսու հանգերձ կը խոստանար ընծայել իրեն Վենետիկոյ մէջ դանուած ամենէն թանկագին մատանին , զայն մունետիկի ձեռամբ գտնալով :

Պորկիան տրհամարհեալ կեղծելով ինքզինքը , դուրս ելաւ ըսելով , « տէր իմ , ձեր ինձ տուած պատասխանը միայն մուրացկանի մը կը վայլէր : »

(Շարունակելի)

Ա. Զ. Դ.

Մասին լրագրոյ խմբագրապետ մեծ . Տիար Կարապետ Ի. Թիւճեանի օրդի :

ՏՈՒԹՈՐ ԵՒՈՒԱՐԳ Կ. ԻԻԹԻՃԵԱՆ

պատիւ ունի ծանուցանել Արգոյ Հասարակութեան թէ ամեն օր ժամը 6էն 10 կը գտնուի Պօլիս , կամուրջին դիմացը Գիւլիւկեան էֆէնտիի դեղարանն , եւ հիւանդ կընդունի : Կիւրակի օրերը նոյն դեղարանին մէջ ժամ 3էն 8 ձրի կը նայի աղքատաց :

Մնացեալ ժամանակները պատրաստ է հիւանդաց այնդեղի , կամ իւր տան մէջ ընդունել , ի Պէշիկլիմաչ , Փոսթա ճատտէ , թիւ 34 :



ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԵՒՈՒԱՐԳ ԵՒՈՒԱՐԳ ԵՒՈՒԱՐԳ

ԸՆԴԵՐՁՈՒ ԵՒՈՒԱՐԳ

1883 ՏԱՐԻՈՅ

ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ազգային Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը պատիւ ունի ծանուցանել Մեծարդոյ հասարակութեան թէ՛ 1883 տարւոյ ընդարձակ օրացոյցը ի լոյս ընծայուած է ի նպատակ Ազգային Հիւանդանոցի :

Հոգաբարձութիւնը ամեն ջանք ի դրոժ դրած է ներկայ տարւոյն ընդարձակ օրացոյցը ճոխացունել զանազան կարեւոր տեղեկութեամբք եւ դիտելոք , ինչպէս որ ընթերցողը կը տեսնէ բացի համառօտ տարեցոյցէ մը , կը պարունակէ նաեւ Թուրքիոյ համայն վիճակագիրը , Օսմանեան պետական եւ հիւպատոսք ի դանազան աշխարհւրդարձակ վիճակագրութիւնք Աւստրիոյ Պէշիկլիմաչի , Բերուի , Բորթոկալի , Մեծին Երիտանիոյ , Գերմանիոյ , Տանիմարգայի , Զուիցերիոյ , Ռուսիոյ , Ճարմանի , Մեքսիկոյի , Միացեալ-Նահանգաց , Յունաստանի , Շուէտ-Նորվեգիոյ , Զիլիի , Զինի , Պարսկաստանի , Պրէզիլիոյ , Ռուսաստանի , Սպանիոյ , Ստորին-Նահանգաց եւ Ֆրանսայի : մի ընդարձակ ժամանակագրական պատմութիւն Երեւելի անցից որ կսկսի 1880 յուլիս 1էն մինչեւ 1882 նոյեմբեր 7 , նոր կանոնագիր հեռագրութեանց Թուրքիոյ , Նե՛հ (Թարիֆա) հեռագիր միջազգային թիւերու , Եւրոպական զանազան ազգաց նամակատուներ , ժամանակացոյց սուրհանդակաց Օսմանեան թղթատարութեանց , Սկզբին Եւրոպական Տաճկաստանի երկաթուղեաց , ընկերութիւնք շոգեշարժ նաւարկութեան , Խըտըվիչէ մախուսէ , Աւստրոյ-Հունկար Լոյտ . Մէտտըրի-Մարիթիմ , Նաւոզչէք Մէսսաժըրի-Մարիթիմի շոգեհաւուց , Բաքէ էնէ նաւուց ընկերութեան , ցուցակ հեռաւորութեանց միջերկրականի եւ սեւաժովու քաղաքաց , տոկոսաւոր եւ պարգեւաւոր արժէթուղթք զլիսաւոր տէրութեանց Եւրոպիոյ , Ս. Փրկչի Ազգային Հիւանդանոցի վիճակագիրը , այլ եւ այլք որ կարի հետաքրքրաշարժ տեղեկութիւնք կը պարունակեն , երկու հանդուրդներ զորս լուծողին Արամեան գրատունը յատկացուցած է քսանական Փրանքի Հայերէն կամ , Ֆրանսերէն գրեանք : Յուցակ զլիսաւոր ազգաց դրամներուն Ֆրանսայի եւ Թուրքիոյ դրամներուն հետ բաղդատեալ եւ զանազան ազգեր :

Կը գտնուի Ազգային Հիւանդանոցի գրատունեակը ի Մեծ Նոր խան միջնայարկ թիւ 49 , Արամեան սպարանն եւ բոլոր դրամաճառաց քով :

Ընդարձակին զինն 3 դանկան Պարզին » 1 »

Կ Ի Ի Ս Թ Ս Վ

Բօլ տը Գօշի սոյն կատարուելան եւ ծաղրաշարժ վիշ պատանութիւնը որ իմ երաշխաւորութեանս ներքեւ թերթ առ թերթ կը հրատարակուէր . այժմ ամբողջացած ըլլալով՝ բոլոր դրամաճառաց քով կը դտնուին եւ կեդրոնատեղին է Գրատունս :

Նաեւ այս առթիւ կը ծանուցանեմ յարգոյ հասարակութեան թէ յառաջիկայ Կաղանդի համար շատ տեսակ ցրքեր պատրաստուած են :

Միայնգամայն Վենետիկի Վիէնայի եւ Իզմիրի սպարաններէն ելած դրեանք եւս կը դտնուին : Գաւառներէ մեղուղեալ յանձնարարութիւնք ամենայն ճշդութեամբ կը կատարուին :

Յ. Յ. ԶԵՆՃԻՐՃԵԱՆ

Մահմուտ բաշա թիւ 239



Ա. Զ. Դ.

Արտաքին գործոց պաշտօնատան թղթակցութեան սենեկի վաղեմի անդամներէն Յովհաննէս էֆէնտի Մարգարեան , որ երբեմն Մանասթըր վիլայէթի թարգմանչութեան եւ յետոյ Բերայի , Իւսկիւտարի եւ Կ. Պօլսոյ ատեաններուն մէջ առաջին քննիչ դատաւորութեան եւ երբեմն Անդրիանուպօլսոյ կուսակալութեան մէջ Օրթաքէօյ գաւառին ընդհանուր դատախազութեան պաշտօններն վարելով , քսան տարիէ աւելի Կայսերական բարեխնամ կառավարութեան յառայած է , այս անգամ ըստ օրինի իրաւագիրական քննութիւն տուած եւ Արդարութեան պաշտօնատուէն փաստաբանութեան առաջին կարգի վիլայական սպացած ըլլալով , պատիւ ունի ծանուցանել Արգոյ Հասարակութեան որ ամէն կարգի պատժական եւ առեւտրական գործոց փոխանորդութիւն պիտի ստանձնէ :

Կեդրոնատեղին է Ղալաթա Գիւրէքճիլէր փողոցին մէջ Զիվէր պէյ խան վերի յարկ 17-թիւ սենեակը :

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Երկասիրեաց Թովմաս Թէրզեան

Ազգային բազմարդիւն գրագէտ եւ կայսերական վարժարանին դասատու Թ. Թէրզեան էֆէնտի այս անգամ իւր Անի ոճով Քերականութեան Բ. մասը ի լոյս ընծայած է Վենետիկի Միթիթարեան հարց մաքուր սպագրութեամբ :

Անի ոճն՝ իրբեւ կատարեալ եւ դիւրութեան միջոց , ամեն Գաղղիագէտ ազգայիններէ ընդունուած ըլլալով , մեր կողմանէ գովեստ շոպիւր աւելորդ կը համարիմք , եւ կը հրաւիրեմք զմեծայարգ սուսուցիչս եւ զիմաստըզս որ փութեան սոյն Բ. մասէն այլ լաւ օգուտներ քաղել :

Կը ծախուի ամեն Հայ գրավաճառաց քով , գին 6 դանկան : Կեդրոնատեղին է Միթիթարեան Հարց գրատունը ի Բէրչէմպէ բաղար , Սեղբոս խան :

ԻՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

ԳԼՈՐԳ ԵՒ ԱՅՎԱԶԵԱՆ